

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 23-ի թիվ 638-Լ որոշմամբ հաստատվել է Ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը (այսուհետ՝ Ռազմավարություն): Վերջինիս առանցքային և հիմնական փուլերից է գործադիր իշխանության մարմնի՝ ներքին գործերի նախարարության կազմավորումը և ներկայումս ոստիկանության կողմից իրականացվող մի շարք իրենց բնույթով քաղաքացիական ծառայությունների իրականացումը նախարարության կողմից: Գործառույթների նման տարանջատումը կհանգեցնի նաև ոստիկանության կողմից կոնկրետ մասնագիտական խնդիրների կատարման վրա շեշտադրմանը:

Ոստիկանության մասով. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը 2002 թվականից ձևավորվեց այն կառուցվածքով, ինչպիսին առանձին փոփոխություններով պահպանվել է մինչև այսօր: 2002 թվականից մինչ այդ գործող Ներքին գործերի նախարարությունը վերակազմակերպվեց ծառայության՝ պահպանելով նույն կառուցվածքը, ավելին, Հանրապետության նախագահի հրամանագրում էլ էր նշվում, որ այս լուծումն ունի ժամանակավոր բնույթ: Ըստ էության՝ նախարարության դասական կառուցվածքով մասնագիտական ծառայությունը չի կարող, մեղմ ասած, ապահովել արդյունավետ գործունեություն, ավելին՝ փաստացիորեն մասնագիտական ծառայությունը ծանրաբեռնված է ոստիկանությանը ոչ բնորոշ գործառույթներով (անձնագրերի և վիզաների տրամադրում, ավտոտրանսպորտային միջոցների հաշվառում, վարորդական վկայական ստանալու քննություններ ընդունել և վարորդական վկայական տալ և այլն):

Մյուս կողմից, նախարարության կառուցվածքը պահպանած մասնագիտական ծառայությունը տեխնիկապես և ինստիտուցիոնալ առումով օբյեկտիվորեն չէր կարող ապահովել իր առջև դրված խնդիրների լուծման փիլիսոփայության փոփոխումը, ուստի և չէր կարող բավարարել հանրության կողմից նախարարության և ծառայության սիմբիոզից ակնկալվող խառը սպասումները: Այլ կերպ ասած՝ ոստիկանության ծառայության համար առկա է ներքին և արտաքին սպասումների և ընկալումների անհամապատասխանություն:

2015 թվականի Սահմանադրության փոփոխությունների տրամաբանությամբ 2018 թվականին ընդունված «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքով Ոստիկանությունն այլևս ոչ թե Կառավարությանն, այլ վարչապետին առընթեր մարմին էր սահմանվում, ինչը այն ուղղակի ենթակայության տակ էր դնում վարչապետին: Բացի այդ, նման կարգավիճակով Ոստիկանությունը՝ հանդիսանալով ապաքաղաքական մարմին, տրամաբանորեն զրկված է ոլորտի քաղաքականության մշակման և իրականացման հնարավորությունից: Դրա արդյունքում պետական կառավարման մարմինների համակարգում բացակայում է այն օղակը, որն անմիջականորեն կարող է քաղաքական պատասխանատվություն կրել ոստիկանության գործունեության ոլորտներում պետության կողմից իրականացվող քաղաքականության և դրա կիրառման համար:

Այդուհանդերձ, մեկ կարևոր հանգամանք պետք է հստակ լինի, ներքին գործերի նախարարության վերականգնումը չի կարող և չպետք է ասոցացվի կառավարության կառուցվածքում ուժերի կուտակման ոչ ժողովրդավարական և անվերահսկելի մի բևեռի ստեղծման գաղափարի կամ դառը փորձի հետ: Այս համեմատությունը տեղին չէ թեկուզ միայն այն հիմնավորմամբ, որ նախկին ներքին գործերի և ստեղծվելիք նոր նախարարության առջև դրված թե՛ քաղաքական և թե՛ քաղաքականության խնդիրները լիովին տարբեր են: Այդ տարբերության օգտին են վկայում կառավարման ձևի փոփոխությունը և քաղաքացիական գիտակցության ավելի զարգացած մակարդակը, ուստի և ժողովրդավարական պետությանը բնորոշ քաղաքացիական և խորհրդարանական վերահսկողության գործուն մեխանիզմների առկայությունը: Մյուս ծանրակշիռ փաստարկը գաղափարախոսական այն փոփոխությունն է, որը նոր ոստիկանության համար նախատեսված է Ռեզիմավարությամբ, սակայն այդ համակարգային ու մտածողության փոփոխությունը բերելը դժվար կլինի առանց համակարգային և կառուցվածքային փոփոխությունների:

Միջազգային փորձ և մասնագիտական դիտարկում. Խոսելով քաղաքական մարմնի և մասնագիտացված ծառայության փոխգործելիության և արդյունավետ կառավարման մասին միջազգային փորձի մասին փորձագիտական շրջանակները նշում են, որ՝

(1) յուրաքանչյուր երկիր ոստիկանության և ընդհանրապես իրավապահ համակարգի որևէ կառուցվածք ընտրելիս պետք է ելնի իր առջև դրված խնդիրներից, որոնց լուծմանը միտված է նման կառուցվածքը, ուստի, այս առումով, հաջողված ունիվերսալ կառուցվածքի մոդելներ չկան,

(2) որևէ կառուցվածք ընտրելիս անհրաժեշտ է ապահովել գործադիր իշխանության մարմնի կառուցվածքում գործող մասնագիտացված ծառայության գործառութային անկախությունը երաշխավորող կարգավորումներ, իսկ որոշ փորձագետներ ի հավելումն շեշտում են նաև մասնագիտացված ծառայության գործառութային պատասխանատվության մասին:

Այսպես՝

(1) Մեր երկրի դեպքում խնդիրներն ամրագրված են ոլորտի Ռազմավարությամբ՝ այն է՝ ոլորտի քաղաքականության միասնական մշակում և համակարգված իրագործման անհրաժեշտություն, քաղաքացիական և քաղաքական վերահսկողության արդյունավետ մեխանիզմների բացակայություն և ի վերջո, մասնագիտացված կազմակերպությանը իրեն ոչ բնորոշ խնդիրներից ձերբազատում՝ միտված ծառայության արդյունավետության բարձրացմանը:

• Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն 2001թ. ընդունել է [Rec\(2001\)10 առաջարկությունը Ոստիկանության էթիկայի եվրոպական կանոնների մասին](#): Սույն փաստաթուղթը պարունակում է մի շարք դրույթներ ոստիկանության կառուցվածքի, ոստիկաններին ուղղված պահանջների, քրեադատավարական համակարգում ոստիկանության դերի և այլնի վերաբերյալ: **Համաձայն 59-րդ կետի՝** *ոստիկանությունը պետք է հաշվետու լինի պետությանը, քաղաքացիներին և նրանց ներկայացուցիչներին*: Ոստիկանության նկատմամբ պետք է կիրառվի արդյունավետ արտաքին հսկողություն: Բացատրական հուշագրում նշվում է, որ կենտրոնական, տարածքային և տեղական մարմինների միջոցով ոստիկանությունը պետք է հաշվետու լինի պետության առջև, որը սահմանում է իր լիազորություններն ու խնդիրները: Այսպես, բոլոր անդամ պետությունները ստեղծել են ոստիկանության նկատմամբ հսկողության մարմին: Բացի այդ, ժողովրդավարական հասարակությունում պետության կողմից ոստիկանության նկատմամբ իրականացվող հսկողությունը պետք է ուղեկցվի ոստիկանության հնարավորությամբ՝ իր գործողությունների կապակցությամբ հաշվետու լինել բնակչությանը: **60-րդ կետի համաձայն՝** *ոստիկանության նկատմամբ պետության հսկողությունը պետք է բաժանված լինի օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ճյուղերի միջև*: Բացատրական հուշագրում նշվում է, որ պարզեցված մոդելի դեպքում օրենսդիրի հսկողությունը ոստիկանության նկատմամբ իրականացվում է a priori, այն է՝ ընդունելով ոստիկանության գործունեությունը և լիազորությունները կարգավորող օրենքներ: Հնարավոր է նաև, որ օրենսդիրը իրականացնի a posteriori հսկողություն «դատական և ներքին գործերի հանձնաժողովի» կամ «խորհրդարանական միջնորդների» միջոցով, որոնք կարող են կամ իրենց նախաձեռնությամբ կամ բնակչության կողմից ներկայացված բողոքների հիման վրա նախաձեռնել քննություն: Գործադիր իշխանությունը, որին ոստիկանությունը հաշվետու է բոլոր պետություններում, ոստիկանության նկատմամբ անմիջական հսկողություն է իրականացնում: Ոստիկանությունը ստանում է գործադիրի կողմից որոշված չափով բյուջետավորում, որը որոշ դեպքերում հաստատվում է նաև խորհրդարանի կողմից: Բացի այդ, ոստիկանությունն ընդունում է ոստիկանության գործունեության առաջնահերթությունների վերաբերյալ դիրեկտիվներ, ինչպես նաև մանրամասն կանոնակարգեր, որոնք կարգավորում են ոստիկանության գործունեությունը: Դատական իշխանությունը ոստիկանության գործունեության նկատմամբ մշտական հսկողություն է իրականացնում քրեական դատավարության

շրջանակներում: Դատական իշխանությունը (այս դեպքում՝ առաջին ատյանի դատարանները) իրականացնում է նաև *a posteriori* հսկողություն քաղաքացիական և քրեական գործերի միջոցով, որոնք հարուցվում են այլ պետական մարմինների, ինչպես նաև քաղաքացիների կողմից: Կարևոր է, որպեսզի իշխանության երեք ճյուղերը մասնակցեն ոստիկանության նկատմամբ հսկողությանը հավասարակշռված հիմունքներով:

- **Մայլթայի սահմանադրական մեխանիզմների, իշխանությունների տարանջատման և դատական համակարգի և իրավապահ մարմինների անկախության վերաբերյալ իր կարծիքում Վենեթիկի հանձնաժողովը** նշել է, որ ժողովրդավարական հասարակությունում կարևոր է, որպեսզի ոստիկանությունն ունենա հասարակության վստահությունը և ընկալվի որպես պետության՝ քաղաքական անկախությամբ օժտված և օրենքի պահպանման և քաղաքացու պաշտպանության մասնագիտացված և անաչառ ծառայություն: Այդ պատճառով, հանձնաժողովը եզրակացրել է, որ Մայլթայի դեպքում պետք է առկա լինի ոստիկանապետի պաշտոնի համար կազմակերպվող հանրային մրցույթ և նշանակող մարմինը (վարչապետ կամ նախագահ) պետք է պարտավորված լինի այդ մրցույթի արդյունքներով, չնայած և նա կարող է օժտված լինել ընտրված թեկնածուի նկատմամբ վետո կիրառելու իրավունքով:

- [1990թ. Կոպենհագենում ընդունված ԵԱՀԽ-ի Մարդկային չափանիշի խորհրդաժողովի Կոպենհագենի խորհրդակցության փաստաթղթի](#) 5,6 կետի համաձայն՝ «զինված ուժերն ու ոստիկանությունը գտնվում են քաղաքացիական իշխանությունների վերահսկողության ներքո և հաշվետու են նրանց»:

- ԵԱՀԿ կողմից 1994թ. դեկտեմբերի 3-ին Բուդապեշտում ընդունված [«Անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների վերաբերյալ վարքագծի կանոնների»](#) 20-րդ պարբերությամբ սահմանվում է, որ մասնակից երկրները համարում են, որ ռազմական, ռազմականացված և ներքին անվտանգության ուժերի, ինչպես նաև հետախուզական ծառայությունների նկատմամբ ժողովրդավարական քաղաքական հսկողությունը կայունության և անվտանգության կարևորագույն բաղադրիչներից է: Նրանք շարունակելու են իրենց զինված ուժերի ինտեգրումը քաղաքացիական հասարակությանը՝ որպես ժողովրդավարության կարևորագույն դրսևորում:

- ԵԱՀԿ կողմից 2008թ. հրատարակված [«Ոստիկանության վերաբերյալ միջազգային չափորոշիչներ. ժողովրդավարական ոստիկանական ուղեցույց»](#)-ով սահմանվում է, որ ոստիկանության հաշվետվողականությունը նշանակում է, որ ոստիկանության գործունեությունը՝ սկսած մեկ ոստիկանի վարքագծից մինչև ոստիկանության գործողությունների իրականացման ռազմավարություններ, նշանակման ընթացակարգեր կամ բյուջեի կառավարում, պետք է բաց լինի տարբեր վերահսկողական հաստատությունների դիտարկման համար: Վերահսկողական հաստատությունները կարող են ներառել գործադիր իշխանությունը (քաղաքական վերահսկողություն, ֆինանսական վերահսկողություն և պետական մարմինների կողմից հորիզոնական վերահսկողություն), օրենսդիր իշխանությունը

(խորհրդարանի անդամներ, խորհրդարանական հանձնաժողովներ), դատական իշխանությունը, ինչպես նաև Մարդու իրավունքների հանձնաժողովները:

• ԵԱՀԿ կողմից հրապարակված «Կարողությունների զարգացման դերը ոստիկանության բարեփոխումներում» աշխատությունը նվիրված է ոստիկանության կարողությունների ամրապնդման էությանը և կոնկրետ նպատակ ունի աջակցելու անցումային պետություններում ոստիկանության բարեփոխումների իրականացմանը: Աշխատությունում առանձին կետերով անդրադարձ է կատարվում ոստիկանության անկախությանը, համաձայն որի՝ առաջարկվում է գործառույթների բաշխում՝ Կառավարության ներկայացուցիչը պատասխանատու է քաղաքականության հաստատման, վերահսկողություն և վերանայման համար, իսկ ոստիկանության ղեկավարությունը իրականացնում է օպերատիվ կառավարման իրավասությունները և դրա հանդեպ վերահսկողությունը:

Ըստ հեղինակի՝ Ոստիկանության բարեփոխումների իրականացման գործում էական նշանակություն ունի որոշումների կայացման գործառույթի համաչափ բաշխումը: Այսպես, ռազմավարական բարեփոխումների նպատակին չի կարելի հասնել առանց որոշումների կայացման հարցում էական ապակենտրոնացման: Սա հեշտացնում է համայնքին առնչվող հարցերում տեղական, թիրախային որոշումների ընդունումը՝ պահպանելով միասնական կազմակերպական կառուցվածքը: Այս հարցում հարկ է սահմանել Ներքին գործերի նախարարության դերը՝ առանձնացնելով վերջինիս ոստիկանության օպերատիվ կառավարմանն ակտիվ մասնակցությունից: Նախարարությունը պետք է իրականացնի քաղաքականության մշակումն ու իրականացումը, օրենքների, երկարաժամկետ ռազմավարությունների և վերահսկողական մեխանիզմների մշակումը: Այս կերպ քաղաքական բաժանարար գիծ կնախանշվի Նախարարության ոստիկանությանն առնչվող գործերի և Ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյաների օպերատիվ կառավարման գործառույթների միջև:

(2) Գալով մասնագիտացված ծառայության՝ Ոստիկանության գործառույթային անկախության ապահովման հարցերին, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձի ուսումնասիրությունը, ոստիկանության նախարարական ղեկավարումը նպատակ է հետապնդում գրավոր և հրապարակային հանձնարարականների միջոցով իրագործել կառույցի քաղաքական ղեկավարումը, որը սակայն չի ենթադրում կոնկրետ գործերի վերաբերյալ հանձնարարականներ, և թույլ է տալիս ոստիկանության ծառայողների չկատարել իրենց «քաղաքական ղեկավարների» այն հանձնարարությունները, որոնք հակասում են օրենքին և ոստիկանության կանոնադրությանը:¹ Ոստիկանության անկախությունը չպետք է լինի բացարձակ, «ժողովրդավարական ոստիկանությունը» (Democratic policing, այս մոդելը իրենից ներկայացնում է ոստիկանական ուժերի տեղակայումը նախարարության կազմում) կոչված է բարձրացնելու քաղաքական պատասխանատվությունը ոստիկանության գործողությունների համար: Որպես հատուկ ծառայություն նախարարության կազմում ոստիկանության տեղակայումը ամենահարմար

¹ “Police Government Relations and Police Independence”, Kent Roach, University of Toronto, հասանելի՝ [այստեղ](#): էջ 21:

կոնցպետն է ոստիկանություն-կառավարություն փոխհարաբերություններում: Այս մոդելը կոչված է բարձրացնելու նախարարի պատասխանատվությունը, ինչպես նաև ոստիկանության գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը նախարարի միջոցով: Այն երկրներում, որտեղ ոստիկանությունը գործում է նախարարության կազմում նախարարը պատասխանատու է կառույցի քաղաքականության և գործունեության հիմնական ուղղությունները մշակելու գործում, որից բխում է նաև կառույցի արդյունավետ գործունեությունը:² Ոստիկանության քաղաքական ղեկավարումը չի կարող ենթադրել կոնկրետ, իրավիճակային հանձնարարական տալը, ամենօրյա ղեկավարում իրականացնելը (day-to-day operation of the police force).³

Մեծ Բրիտանիայի կարգավորումների համաձայն՝ ոստիկանական գլխավոր ծառայողը պատասխանատու է օրենքի առաջ ոստիկանական գործառույթներ կատարելիս և քաղաքական ղեկավարում իրականացնող նախարարի առաջ ոստիկանական ուժերի, անձնակազմի և այլ ռեսուրսների արդյունավետ կառավարման համար՝ բոլոր դեպքերում պահպանելով գործառույթային անկախությունը:

Նախարարը և ոստիկանապետը պետք է սերտորեն համագործակցեն գործառույթային ինքնուրույնությունը պահպանելու և ոստիկանության առջև դրված նպատակներն ու խնդիրները արդյունավետ իրագործելու համար, ոստիկանության ամենօրյա ղեկավարումն (day-to-day management) իրականացվում է ոստիկանապետի կողմից:⁴ Ոստիկանության ծառայողները իրավակիրառ գործառույթներ իրականացնելիս (օրինակ՝ քրեական գործերի քննություն, խուզարկություն, ձերբակալում) լիովին անկախ են գործադիր իշխանությունից և պատասխանատու են բացառապես օրենքի առաջ, այլ գործառույթներ իրականացնելիս նրանք պատասխանատու են կառավարության առջև՝ այն պաշտոնատար անձի միջոցով, որն օրենքի ուժով պատասխանատու է ոստիկանության գործողությունների համար:⁵

Համեմատություն ՀՀ-ում գործող կառուցվածքային համադրելի այլ մոդելների հետ. ՀՀ օրենսդրության վերլուծությունից⁶ հետևում է, որ նախարարություններին վերապահված առանձին ուղղությունների համակարգման, այդ ուղղությամբ աշխատանքները առավել արդյունավետ իրականացնելու համար նախարարությունների կազմում կարող են ստեղծվել նախարարությանը ենթակա մարմիններ, ինչպիսիք են օրինակ՝ փրկարար ծառայությունը Արտակարգ իրավիճակների

² Տե՛ս հղում 1, էջեր՝ 18-19, 28, 31, 39:

³ Ի թիվս նախորդ հղման տե՛ս նաև Section 31 of Ontario’s Police Services Act and Policy/Operational Matters, և Sections 31(3) and (4) of Ontario’s Policing Services Act

⁴ Տե՛ս հղում 1, էջ 37-38:

⁵ Տե՛ս հղում 1, էջ 40-41

⁶ «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենք, ՀՕ-207-Ն, 23.03.2018թ., հոդված 3; «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենք, ՀՕ-260-Ն, 23.03.2018թ., հոդված 6-7

նախարարության կազմում, զինված ուժերի գլխավոր շտաբը՝ պաշտպանության նախարարության կազմում, քրեակատարողական ծառայությունը՝ արդարադատության նախարարության կազմում:

Թվարկված ենթակա մարմինները իրենցից ներկայացնում են պետական ծառայության առանձին տեսակներ, որոնց ղեկավարումն իրականացնում է ենթակա մարմնի ղեկավարը, համապատասխանաբար՝ փրկարար ծառայության տնօրենը, ՀՈՒ գլխավոր շտաբի պետը, քրեակատարողական ծառայության պետը, սակայն վերջիններս իրենց հերթին հաշվետու են համապատասխան նախարարներին, նախարարները վերահսկում են ենթակա մարմինների գործունեությունը և իրականացնում են ենթակա մարմինների կառավարումը:⁷

Համեմատական

աղյուսակը

ստորև՝

⁷ Առավել մանրամասն տե՛ս. ԱԻՆ կանոնադրությունը հաստատելու մասին ՀՀ Վարչապետի՝ 11-ը հունիսի 2018թ.-ի 740-Լ որոշման հավելվածի 16-րդ կետը, 18-րդ կետի 3-րդ պարբերությունը, 19-րդ, 20-րդ, 23-րդ, 28-րդ պարբերությունները, 35-րդ կետը: ՊՆ կանոնադրությունը հաստատելու մասին ՀՀ Վարչապետի՝ 2019թ.-ի հուլիս 25-ի 992-Լ որոշման 17-րդ կետը, 19-րդ կետի 2-րդ, 6-րդ, 14-րդ, 18-րդ և 19-րդ պարբերությունները, 35-րդ կետը: ՀՀ ՀՈՒ ԳՇ կանոնադրությունը հաստատելու մասին ՀՀ Կառավարության՝ 04.07.2019թ.-ի 922-Լ որոշման 12-15-րդ կետերը: ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին արդարադատության նախարարի՝ 16.07.2018թ.-ի 348-Լ հրամանի 12-13-րդ կետերը, 17-18-րդ կետերը:

Անկախ. Բաղադրիչ	Պաշտոնի նշանակում/ազատում			Կոչումների շնորհում			Կանոնա դրությա ն և կառուցվ ածքի հաստա տում	Հաստ իքացո ւցակի հաստ ատում	Քաղաք ականու մշակում / ներառյ ալ կադրայ ին	Գործունեությ ան ուղղություննե րի սահմանում	Բյուջետայ ին հայտ /ֆինանս ական վերահսկո ղություն	Ծառայ ողակա ն քննութ յուն/ տույժ
	Պետ	Պետի տեղակ ալ	Ավագ հրամ կազմ	Բարձրագույ ն	Միջին կազմ	Կրտսե ր						
Նախարար ություն/ ենթակա մարմին												
ՊՆ/ԳՇ ⁸	Նախագահ Վարչ. առաջ	Նախագահ Վարչ. Առաջ.	-	Նախագահ			Կառավա րություն	Նախա րար	ՊՆ	ԱԽ	ՊՆ	Նախա րար/ ԳՇ պետ/ հրամա նատա ր
ԱԻՆ/ՓԾ ⁹	Վարչապ ետ Նախ. Առաջ.	Նախա րար Պետի Առաջ	Նախար ար	Վարչապետ Նախ. առաջ.	Նախարար Պետի առաջ.	ՓԾ տնօրե ն	Նախար ար	Նախա րար	ԱԻՆ	Նախարար	ԱԻՆ	Նախա րար/ ՓԾ տնօրե ն/ հրամա նատա ր

⁸ Պաշտպանության նախարարություն/Զինված ուժերի Գլխավոր Շտաբ

⁹ Արտակարգ իրավիճակների նախարարություն/Փրկարար Ծառայություն

ԱՆ/ՔԿԾ ¹⁰	Վարչապետ Նախ. առաջ.	Նախարար Պետի առաջ.	Նախարար	Վարչապետ Նախ. առաջ.	Նախարար Պետի առաջ.	ՔԿԾ պետ	Նախարար	Նախարար	ԱՆ	Նախարար	ԱՆ	Նախարար/ՔԿԾ պետ/ ՔԿՀ պետ
----------------------	---------------------------	--------------------------	---------	------------------------	--------------------------	------------	---------	---------	----	---------	----	-----------------------------------

¹⁰ Արդարադատության նախարարություն/Քրեակատարողական ծառայություն

Միգրացիոն ծառայության մասով. Ռազմավարությամբ ամրագրված է, որ բարեփոխումների նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է նաև լրջորեն դիտարկել միգրացիայի ու քաղաքացիության ոլորտում կրկնվող և փոխլրացնող գործառույթները մեկ մարմնի կողմից արդյունավետ իրականացնելու հնարավորությունը: Եվ այս համատեքստում անհրաժեշտ է համարվել միգրացիոն ծառայության գործառույթներ իրականացնող մարմնի հետագա կարգավիճակի փոփոխությունն ու այդ գործառույթների ներառումը նոր նախարարության կազմակերպարավական ձևում:

Այս անհրաժեշտությունն առաջանում է միգրացիայի ոլորտի գործառույթների խորն ուսումնասիրության ու միջազգային լավագույն ընդունված մոդելների վերլուծության արդյունքում:

Հայաստանում միգրացիոն գործառույթների իրականացման անարդյունավետության հիմնական պատճառն այն է, որ դրա էական բաղադրիչներից մեկը՝ քաղաքացիներին, օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց ծառայությունների մատուցումը բաշխված է տարբեր մարմինների միջև, և շահառու խմբերը ստիպված են լինում գործ ունենալ բազմաթիվ գերատեսչությունների հետ մեկ խնդիր լուծելու համար: Արդյունքում նվազում է միգրացիայի ոլորտի կառավարման արդյունավետությունը և ինտեգրվածությունը, բարդանում է գործողությունների համակարգումը, դանդաղում են հանրային ծառայությունների մատուցման գործընթացները, մեծանում է գործողությունների կրկնակի իրականացումը, առաջանում են տվյալների փոխանցելիության և տվյալների շտեմարանների սինխրոնացման հարցեր, ինչպես նաև անձերի և դեպքերի նույնականացման հետ կապված բարդություններ:

Առաջատար երկրների ու անդրսահմանյան կառույցների պրակտիկան ցույց է տալիս, որ միգրացիայի ոլորտի գործառույթները լավագույնս գործարկվում են համապատասխան ներքին գործերի հարցերով զբաղվող կառույցներում (Ավստրալիայի պարագայում՝ Department of Home Affairs, ԱՄՆ պարագայում՝ Department of Homeland Security, ԵՄ պարագայում՝ DG for Migration and Home Affairs)՝ հաշվի առնելով միգրացիոն գործառույթների բնույթն ու մատուցվող ծառայությունների տեսակները (օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց ապաստանի տրամադրման կազմակերպում, ռեադմիսիոն միջպետական համաձայնագրերով սահմանված հանձնառությունների կատարման ապահովում և այլն):

Եվրոպական և ԱՊՀ 30 պետությունների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ամենից հաճախ՝ 22 պետություններում (Բուլղարիա, Բելառուս, Գերմանիա, Էստոնիա, Խորվաթիա, Կիպրոս, Լեհաստան, Լատվիա, Լիտվա, Հունաստան, Հունգարիա, Մեծ Բրիտանիա, Մակեդոնիա, Մոլդովա, Շվեդիա, Չեխիա, Ռումինիա, Ռուսաստան, Սլովակիա, Սլովենիա, Ուկրաինա, Ֆինլանդիա) միգրացիոն մարմինը ներառված է Ներքին գործերի նախարարության համակարգում (հարկ է նշել, որ այս դեպքերի մեծամասնությունում ներքին գործերի նախարարությունները գործում են ոչ թե ուժային, այլ

քաղաքացիական սկզբունքով՝ Home Affairs տրամաբանությամբ), 4 երկրների դեպքում (Իսլանդիա, Իռլանդիա, Նիդեռլանդներ, Շվեյցարիա) այդ մարմինը գործում է Արդարադատության նախարարության կազմում, մեկ դեպքում (Լիխտենշտեյն) այն ներառված չէ որևէ նախարարության մեջ, և մեկական դեպքում էլ այդ մարմինը գործում է Աշխատանքի և սոցիալական հարցերի (Նորվեգիա), Ընտանիքի և համերաշխության (Լյուքսեմբուրգ), Հանրային ծառայությունների նախարարությունների (Ալբանիա) կազմերում: Վերոհիշյալ երկրների փորձը վերահաստատում է, որ միգրացիայի ոլորտի գործառույթները լավագույնս գործարկվում են ներքին գործերի հարցերով զբաղվող կառույցներում հաշվի առնելով դրանց բնույթն ու մատուցվող ծառայությունների տեսակները (սահմանային հսկողությանը մասնակցություն, մուտքի արտոնագրերի տրամադրում, օտարերկրյա քաղաքացիներին կացության կարգավիճակների տրամադրում, օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց հումանիտար նպատակներով պաշտպանության տրամադրում (փախստականի կարգավիճակ, ժամանակավոր պաշտպանություն և այլն), օտարերկրացիների աշխատանքային գործունեության կանոնակարգում, քաղաքացիության շնորհում և անձը հաստատող փաստաթղթերի տրամադրում, պայքար անկանոն/անօրինական միգրացիայի դեմ, աշխատանքային միգրանտների իրավունքների և շահերի պաշտպանություն, ռեադմիսիոն միջպետական համաձայնագրերով սահմանված հանձնառությունների կատարման ապահովում): Միևնույն ժամանակ միգրացիոն հարցերով զբաղվող մարմիններին բնորոշ չեն միգրանտներին սոցիալական աջակցության տրամադրման և նրանց ինտեգրման հետ կապված գործառույթներ, որոնք նախագծով առաջարկվում է փոխանցել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

Վերը նշված գործառույթներով միգրացիոն մարմնի ներառումը Ներքին գործերի նախարարության համակարգում լուծում է նաև ոլորտային քաղաքականության մշակման և դրա իրականացման տարանջատման և իրականացման մշտադիտարկման կարևորագույն խնդիրը: Այսպես, Ներքին գործերի նախարարությանը օրենքով կվերապահվի միգրացիոն քաղաքականության մշակման և իրականացման մշտադիտարկման գործառույթը (ներկայումս այդ գործառույթը որևէ մարմնի վերապահված չէ), իսկ Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը կլինի ոլորտային քաղաքականությունն իրականացնող մարմինը:

Արտակարգ իրավիճակների նախարարության մասով. Ներքին գործերի նախարարության ձևավորման շրջանակներում առաջ է եկել նաև արտակարգ իրավիճակներում պետական արձագանքի արդյունավետության բարձրացմանն ուղղված փոփոխությունների անհրաժեշտություն: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է Արտակարգ իրավիճակների նախարարության գործառույթների ներառմանը նոր ստեղծվող նախարարության կազմում:

Միջազգային փորձագետների հետ քննարկումներում մշտապես բերվում է այն փաստարկը, որ Հայաստանի պես սահմանափակ ռեսուրսներ ունեցող երկրում, որն ունի արտաքին ու ներքին անվտանգության առկա իրավիճակը, գտնվում է սեյսմիկ անկայունության գոտում, ինչպես նաև ունի ինստիտուտների հորիզոնական համագործակցության ոչ բավարար աստիճանի զարգացած մշակույթ, տրամաբանություն կա աղետների ու այլ ճգնաժամային իրավիճակներում ունենալ մեկ կետից կառավարվող և միմյանց փոխրացնող արձագանք, որը հենց միայն միասնական կառավարման հաշվին առավել արդյունավետ կլինի:

Ուստի, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում Կառավարության քաղաքականության մշակման ու իրականացման իրավասությունը Ներքին գործերի նախարարությանը վերապահելը կարելի է պայմանավորել հետևյալ հանգամանքներով՝

- ✓ աղետների ու այլ ճգնաժամային իրավիճակներում մեկ կետից կառավարվող և միմյանց փոխրացնող արձագանքի ապահովման անհրաժեշտությամբ,

նյութատեխնիկական, կարողությունների փոխրացման ու կառավարման, ռեսուրսների համատեղ օգտագործման նպատակահարմարությամբ:

Ըստ այդմ, առաջարկվող լուծումներով Ներքին գործերի նախարարության կազմում կներառվի Փրկարար ծառայությունը՝ որպես նախարարությանը ենթակա մարմին՝ իր կառուցվածքային ստորաբաժանումներով, հիմնական մասնագիտական գործառույթներ իրականացնող կառուցվածքային միավորները կընդգրկվեն նախարարության կազմում: Ըստ այդմ՝ ԱԻՆ նախարարությունը կդադարեցնի իր գործունեությունը:

Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում պետական արձագանքի առաջարկվող ինստիտուցիոնալ լուծումը, այսինքն՝ Ներքին գործերի նախարարության կազմում այդ գործառույթների մեկտեղման մոտեցումը միջազգային պրակտիկայում ընդունված մոդելներից է:

Այսպես, օրինակ, **Էստոնիայի** ներքին գործերի նախարարության գործունեության հիմնական ոլորտներն են, ի թիվս այլնի, պետության ներքին անվտանգության երաշխավորումը և հասարակական կարգի պահպանությունը, պետական սահմանի հսկողությունն ու պահպանությունը և սահմանային ռեժիմի երաշխավորումը, ճգնաժամային կառավարման, պետական օպերատիվ պահեստների և հրդեհաշիջման ու փրկարարական աշխատանքների հետ կապված հարցերի կառավարումը, քաղաքացիության և միգրացիայի հարցերը:

Նախարարության կազմում գործում են Անվտանգային ոստիկանության վարչությունը (Security Police Administration), Ոստիկանությունն ու Սահմանապահ ծառայությունը (Police and Border Guard Board), Փրկարար ծառայությունը (Rescue Board):

Ֆինլանդիայի ներքին գործերի նախարարության իրավասության շրջանակներում են՝ արտակարգ իրավիճակների արձագանքման կենտրոնի աշխատանքների ուղղորդումը և ղեկավարումը, համապատասխան օրենսդրության մշակումը, ինչպես նաև քաղաքացիական ճգնաժամերի կառավարման Ֆինլանդիայի ազգային կարողությունների պահպանումը, զարգացումն ու համակարգումը¹²:

Վրաստանի ներքին գործերի նախարարության կառուցվածքում գործում են ինչպես Ոստիկանությունն իր տարածքային ստորաբաժանումներով, Պարեկային ոստիկանությունը, Սահմանապահ ոստիկանությունը, այնպես էլ Պետական նյութական պահուստների վարչությունը, Արտակարգ իրավիճակների կառավարման գործակալությունը¹³:

Չեխիայի ներքին գործերի նախարարության կազմում գործում է Չեխիայի հանրապետության հրշեջ և փրկարարական ծառայության գլխավոր տնօրինությունը: Չեխիայում գործում է հնտեգրված փրկարարական համակարգը (IRS), որը կոչված է համակարգելու փրկարարական և մաքրման միջոցառումներն այն դեպքերում, երբ իրավիճակը պահանջում է մի քանի մարմինների ուժերի և միջոցների, օրինակ՝ հրշեջների, ոստիկանության, բժշկական փրկարարական ծառայության օգտագործումը կամ այն դեպքում, երբ անհրաժեշտ է փրկարարական և մաքրման միջոցառումների համակարգումը Ներքին գործերի նախարարության կամ տարածաշրջանների ղեկավարների կամ ընդլայնված լիազորություններով համայնքների ղեկավարների կողմից¹⁴:

Սլովակիայի ներքին գործերի նախարարության կազմում գործում է Ճգնաժամային կառավարման բաժինը, որը պատասխանատու է քաղաքացիական պաշտպանության, ճգնաժամային կառավարման, ինտեգրված փրկարարական համակարգի, քաղաքացիական արտակարգ իրավիճակների պլանավորման, կենսականորեն կարևոր ենթակառուցվածքների պաշտպանության, տնտեսական մոբիլիզացիայի, քաղաքացիական պաշտպանության գույքագրման և մատակարարումների կառավարման, ինչպես նաև մարդասիրական օգնության համար¹⁵:

¹¹ <https://www.riigiteataja.ee/en/eli/521012014008/consolide>

¹² <https://intermin.fi/en/areas-of-expertise>

¹³ <https://police.ge/en/ministry/structure-and-offices>

¹⁴ <https://www.mvcr.cz/mvcren/article/organisation-620896.aspx>

<https://www.hzscr.cz/hasicien/article/about-us-scope-of-activities-integrated-rescue-system.aspx>

¹⁵ <https://www.minv.sk/?okr>

Վկայակոչված միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ այդ երկրների ներքին գործերի նախարարությունները ոչ միայն համակարգում են այդ ոլորտների ծառայությունների գործունեությունը, այլև պատասխանատու են ծառայողների կրթության, կարողությունների զարգացման ու ոլորտի օրենսդրության կատարելագործման համար՝ ըստ այդմ ապահովելով պատասխանատվության ոլորտների կատարելագործման համակարգվածությունն ու կենտրոնացվածությունը՝ թե՛ օրենսդրական, թե՛ գործնական մակարդակներում:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը և ակնկալվող արդյունքը

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի մարմինների գործառույթների առավել արդյունավետ իրականացումն ապահովելու, ինչպես նաև Ռազմավարությամբ սահմանված խնդիրների լուծումներ ապահովելու համար առաջարկվում է Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության մարմինների համակարգում կազմավորել ներքին գործերի բնագավառում պետական քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական կառավարման մարմին՝ Ներքին գործերի նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն): Արտակարգ իրավիճակների նախարարությունը կդադարեցնի իր գործունեությունը՝ ըստ անցումային ժամանակացույցի:

Ներկայացվող օրենքների նախագծերի համաձայն՝ Նախարարության ենթակա մարմիններ են լինելու **Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը, Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը, Փրկարար ծառայությունը:** Նախարարության ենթակայությանն են հանձնվելու ներկայումս Ոստիկանության ենթակայությամբ գործող ուսումնական հաստատությունը՝ **«Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը** և Արտակարգ իրավիճակների նախարարության ենթակայությամբ գործող **«Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ը:**

Ենթակա մարմինների ղեկավարներին պաշտոնի նշանակելու և այդ պաշտոնից ազատելու է վարչապետը ներքին գործերի նախարարի առաջարկությամբ:

Ընդհանուր տրամաբանությամբ, ոստիկանության պետը շարունակելու է իրականացնել ոստիկանության ամենօրյա անմիջական ղեկավարումը, իսկ ներքին գործերի նախարարը պատասխանատու է լինելու ոլորտի քաղաքականության մշակման և իրականացման, կադրային նշանակումներ է կատարելու ոստիկանության գլխավոր խմբի պաշտոններում: Նույն կերպ ոստիկանության գլխավոր խմբի պաշտոնների ծառայողներին կարգապահական տույժի է ենթարկելու նախարարը, իսկ մյուս խմբերի պաշտոնների ծառայողներին՝ ոստիկանության պետը: Հակակշիռների և զսպումների ահա այսպիսի տրամաբանության վրա են կառուցված նաև մյուս հարաբերությունները:

Նախարարության ենթակայությանն է հանձնվելու նաև ներկայումս Ոստիկանության համակարգում գործող «Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ը և Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան՝ **հիմք ստեղծելով դրանց միավորման արդյունքում ունենալ Ներքին գործերի նախարարության կրթահամալիր:** Նման փոփոխությունը հիմնավորվում է նրանով, որ նախարարությունն է մշակելու ոստիկանությունում և փրկարար ծառայությունում ծառայության կադրային քաղաքականությունը, ուստի, մասնագիտական կրթության ոլորտի քաղաքականությունը պետք է շաղկապված լինի և բավարարի ծառայության փոփոխվող շահերը: Միաժամանակ, **այսպիսի կրթահամալիրի առկայությունը կարող է բազա դառնալ նախարարության մյուս ենթակա մարմնի՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության քաղաքացիական ծառայողների պատրաստումն ու շարունակական վերապատրաստումն իրականացնելու համար:**

Նախարարության ենթակայությամբ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության տեղակայումը պայմանավորված է միգրացիոն իրավիճակի շարունակական փոփոխությամբ և միգրացիոն քաղաքականության գերակայությունների վերագնահատմամբ, որոնք այսօր արդիական են դարձնում միգրացիայի կառավարման պետական համակարգի բարեփոխումների և արդյունավետության բարձրացման խնդիրը: Նշված բացերի հաղթահարման և միգրացիայի կառավարման արդյունավետության և համապարփակության մեծացման նպատակով միգրացիայի կառավարումը նպատակահարմար է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայությունը ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության հետ միավորմամբ կենտրոնացնել ոլորտի քաղաքականություն մշակող մեկ կառույցի ներքո քաղաքացիական բնույթի ծառայության ձևով՝ ինտեգրված մոտեցում ցուցաբերելով միգրացիոն շղթայի բոլոր բաղադրիչների կառավարմանը: Արդյունքում օտարերկրյա քաղաքացիների մուտքի և կացության հետ կապված բոլոր գործառույթները կկենտրոնան մեկ պետական մարմնում, կմեծանա միգրացիոն քաղաքականության ձևավորման և իրագործման փաստափոխությունը, միգրացիոն քաղաքականության արդյունքների և ազդեցության գնահատման արդյունավետությունը, կբարելավվի քաղաքացիներին և միգրանտներին տարբեր խմբերին տրամադրվող հանրային ծառայությունների որակը, կմեծանա դրանց հասանելիությունը, կզարգանան ոլորտի աշխատակիցների կարողությունները, առավել դյուրությամբ կիրականացվի ոլորտի ենթակառուցվածքների զարգացումը: **Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ձևավորմանը զուգահեռ նպատակահարմար է նաև Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայությանը ներկայումս վերապահված միգրանտների սոցիալական աջակցությանն ու ինտեգրմանն ուղղված գործառույթները փոխանցել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ նկատի ունենալով, այդ գործառույթի բացառապես սոցիալական բնույթը:**

Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ղեկավարին «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան նշանակելու է վարչապետը՝ ներքին գործերի նախարարի առաջարկությամբ:

Ինչպես Ոստիկանության պետի դեպքում, Փրկարար ծառայության տնօրենը ևս պատասխանատու է լինելու փրկարար ծառայության ամենօրյա գործունեության ղեկավարման համար՝ կրելով ծառայողական պատասխանատվություն, իսկ ոլորտի քաղաքական պատասխանատվությունը կրողը լինելու է Ներքին գործերի նախարարը:

Առաջարկվող օրենսդրական լուծումներով Փրկարար ծառայությունը Ոստիկանության պես ունենալու է նախարարությանը ենթակա մարմնի կարգավիճակ՝ ընդգրկելով մասնագիտական և տարածքային ստորաբաժանումներ: Դրանից բացի, նոր ստեղծվող նախարարության կազմում ընդգրկվելու են նաև ԱԻՆ ենթակայությամբ գործող Պետական ռեզերվների գրասենյակը, Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնը, «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն», «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն», «Սեյսմիկ պաշտպանության արևելյան ծառայություն» ՊՈԱԿ-ները և «Հատուկ Լեռնափրկարար ծառայություն» ՓԲԸ-ն:

Այսպիսով, Նախարարության ենթակա մարմիններն են լինելու՝

- Ոստիկանություն
- Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն
- Փրկարար ծառայություն:

Նախարարության ենթակայությանն է հանձնվելու նաև Ոստիկանության և ԱԻՆ կազմում գործող ուսումնական կենտրոնները՝ մեկ միասնական պետական ոչ առևտրային կազմակերպության վերածելու միտումով:

Նախատեսվում է Նախարարության կազմում ներառել հետևյալ հիմնական կառուցվածքային ստորաբաժանումները՝

- Ռազմավարական պլանավորման, քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչություն,
- Միջազգային կապերի վարչություն,
- Հանրային ծառայությունների որակի ապահովման վարչություն,
- Ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչություն:

Նախարարության կառուցվածքում նախատեսվում է ստեղծել հետևյալ աջակցող ստորաբաժանումները՝

- Փորձաքրեագիտական վարչություն,
- Բժշկական վարչություն,

- Իրավաբանական վարչություն,
- Ֆինանսաբյուջետային վարչություն,
- Տնտեսական վարչություն,
- Մարդկային ռեսուրսների կառավարման վարչություն,
- Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչություն,
- Գործավարության և գաղտնիության ռեժիմի ապահովման վարչություն,
- Կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն:

Ներկայացված կառուցվածքի շրջանակներում Նախարարությունն իրականացնելու է ինչպես իր կողմից, այնպես էլ ոստիկանության կողմից տրամադրվող՝ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնող սուբյեկտների կողմից լիցենզիայի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն: Նախարարության իրավասությանն են հանձնվելու նաև տրանսպորտային միջոցների շահագործման կանոնների պահպանման ապահովման, վարորդական իրավունքի և տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշների տրամադրման գործառույթները: Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ փաթեթում ներառված «Ձեռքի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսվում է, որ Նախարարությունը այսուհետ տրամադրելու է զենքի առևտրի լիցենզիան, ինչը մինչ այժմ իրականացնում է Ոստիկանությունը:

Միաժամանակ, պետական կառավարման մարմինների նման հարաբերակցության պայմաններում Նախարարությունը հանդիսանալու է նաև իր ենթակա մարմինների՝ Ոստիկանության, Միգրացիայի և քաղաքացիության ծառայության, Փրկարար ծառայության, ինչպես նաև ենթակայությանը հանձնվող մյուս կառույցների բյուջետային կարգադրիչ՝ իրականացնելով նաև այդ մարմինների կարիքների համար գնումների գործընթացները: **Սա պայմանավորված է հատկապես այն հանգամանքով, որ յուրաքանչյուր ենթակա պետական մարմին պետք է կենտրոնանա իր հիմնական գործառույթի վրա, իսկ աջակցող գործառույթները կապասարկի հենց Ներքին գործերի նախարարությունը:**

Նախարարության նման կառուցվածքի պայմաններում նախատեսվում է ոստիկանության հիմնական մասնագիտական և աջակցող ստորաբաժանումների հետևյալ դասավորությունը.

Ոստիկանության հիմնական մասնագիտական ստորաբաժանումներ (ենթակա է վերանայման)

- Քրեական ոստիկանության գլխավոր վարչություն,
- Հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչություն,
- Ոստիկանության զորքեր (ներառելու է նաև Պետական պահպանության գլխավոր վարչությունը),
- Օպերատիվ փնտրողական վարչություն,

- Պարեկային ծառայություն (վարչության իրավունքով),
- Օպերատիվ կառավարման կենտրոն (վարչության իրավունքով/ներառելու է նաև Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնը),

- Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրո (վարչության իրավունքով):

Ոստիկանության աջակցող ստորաբաժանում է լինելու Ինֆորմացիոն կենտրոնը (վարչության իրավունքով):

Ոստիկանության համակարգի մաս են կազմում նաև ոստիկանության տարածքային ստորաբաժանումները:

Միգրացիայի և քաղաքացիության ծառայության համար նախատեսվում է հետևյալ կառուցվածքը.

Միգրացիայի ու քաղաքացիության ծառայության հիմնական մասնագիտական ստորաբաժանումներ (ենթակա է վերանայման)

- Ծրագրերի, իրավական հսկողության և վիճակագրության բաժին,
- Թվայնացման, բնակչության պետական ռեգիստրի վարման և սպասարկման բաժին,
- Քաղաքացիության շնորհման և դադարեցման բաժին,
- Քաղաքացիության պարզման և վերադարձի բաժին,
- Ապաստանի հարցերի բաժին,
- Վիզաների և կացության բաժին,
- Օտարերկրացիների վերադարձի բաժին,
- Անձնագրային բաժին.

Միգրացիայի ու քաղաքացիության ծառայության համակարգի մաս են կազմում նաև ծառայության տարածքային ստորաբաժանումները:

Փրկարար ծառայության համար նախատեսվում է հետևյալ կառուցվածքը.

Փրկարար ծառայության հիմնական մասնագիտական ստորաբաժանումներ (ենթակա է վերանայման)

- Բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման վարչություն
- Փրկարարական ուժերի վարչություն
- Քաղաքացիական պաշտպանության վարչություն
- Ծառայության կազմակերպման վարչություն
- Թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչություն
- Հոգեբանական աջակցության բաժին

Փրկարար ծառայության համակարգի մաս են կազմում նաև փրկարար ծառայության տարածքային ստորաբաժանումները:

Նախատեսվող փոփոխությունների արդյունքում գործառույթների շարունակականությունը և ծառայողների սոցիալական երաշխիքները

Օրենքների նախագծերի ընդունումից հետո տեղի կունենա Կառավարության կողմից Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ենթակայության սահմանումը, որից հետո ինչպես վերջինս, այնպես էլ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության աշխատակիցները կշարունակեն իրենց գործառույթների իրականացումը մինչև փոխվարչապետի որոշմամբ սահմանված կարգով վերապատրաստվելը և ըստ հաստատված պաշտոնների անվանացանկի՝ պաշտոնների նշանակվելը:

Այս փուլում անհրաժեշտ է հատուկ ընդգծել, որ նկատի ունենալով ոստիկանության ծառայողների համար սահմանված սոցիալական երաշխիքների համակարգը և դրանցից օգտվելու հնարավորության կորուստը աջակցող ստորաբաժանումներում քաղաքացիական ծառայության անցնելու դեպքում՝ նախագծով նախատեսվում է 15 օրացույցային տարի ոստիկանության ծառայողի աշխատանքային ստաժ ունեցող ծառայողներին հնարավորություն տալ, որպեսզի վերջիններիս աշխատանքային ստաժը՝ մինչև երկարամյա ծառայության կենսաթոշակի սահմանաչափին՝ 20 տարվան հասնելը հաշվարկվի որպես զինվորական ծառայության ստաժ: Վերջինս հնարավորություն կտա ուղղակիորեն իրացնել նաև նշված խմբի ոստիկանության ծառայողների լեգիտիմ ակնկալիքը համապատասխան սոցիալական երաշխիքից օգտվելու մասով:

Նույն տրամաբանությամբ, նախագծերով ամրագրվում է, որ փրկարար ծառայողները քաղաքացիական ծառայության պաշտոնում նշանակվելու օրվանից հետո՝ հինգ տարվա ընթացքում, օգտվում են «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով սահմանված երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքից. այս դեպքում քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցրած ժամանակահատվածը համարվում է զինվորական ծառայության ստաժ:

3. Նախագիծը մշակող մարմինը

Օրենքների նախագծերի փաթեթը մշակվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից:

4. Լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունները

Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 23-ի թիվ 638-Լ որոշմամբ հաստատվել է Ոստիկանության բարեփոխումների 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի ֆինանսական գնահատման տվյալներով՝ ներքին գործերի նախարարության կազմավորման միջոցառումը կազմում է 25.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ: Ֆինանսավորման այն հատվածը, որը վերաբերում է կառուցվածքի վերաբերյալ ուսումնասիրությունների և ոստիկանության ընթացիկ գործառույթների ու կառուցվածքի աուդիտի իրականացմանը, կատարվելու է միջազգային կազմակերպությունների միջոցով: